սարդ գոլով. բայց անձամբ է վայելուչ և հասակաւն կատարեալ, և իմաստութեամբն զարդարեալ և հեռեւեալ։ Եւ կոչի անուն նորա Հեներիքուս թագաւոր. զոր Տէր Աստուած թագաւորն թագաւորաց փրկիչ ամենայն աշխարհաց՝ փրկեսցէ զինքն ամենայն փորձանաց հոգեկան և մարմնական. և շնորհեսցէ նմա բազում ամուք թագաւորել. և տացէ նմա սիրտ սուրբ և հոգի ուղիղ, նորոգեսցէ ի նմա և բեւեռեսցէ զերկիւղ իւր սուրբ ի սրտի իւրոյ, միշտ խորհել զբարին և զհաճոյսն ըստ Աստուծոյ կամաց, զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարեսցէ զկեանս իւր. զի և մեզ ընդ նմա լիցի խաղաղութիւն, և հանդարտութեամբ ի թշնամեաց պատերազմէ և յորոգայթից թշնամոյն. ամէն։ Նա և տացէ նմա թագաւորն անմահ Քրիստոս Աստուած զիւր ամենակարող և յաղթող զզօրութիւն և զքաջութիւն, յաղթող լինել ի պատերազմի. վանել զթշնամիսն իւր և խոնարհեցուցանել ի ներքոյ ոտից իւրոց. որպէս երբեմն թագաւորն սուրբն Դաւիթ՝ զանօրէն զմարբլուրն զԳողիաթ։ Եւ ամենազօրն Աստուած միշտ հովանի լիցի ի վերայ Նորա. և իւր հզօր ձեռամբ և բարձր բազկաւ վերակացու եղիցի նմա զամենայն աւուրս կենաց իւրոց. ամէն։ Եւ զհանգուցեալն զքրիստոսասէր թագաւորն մեր Զիկմունդ Ակուստուս՝ դասեսցէ ընդ բարեպաշտ թագաւորսն, և հանգուցէ ընդ արդարսն յանանց փառսն և յերկնից թագաւորութիւն. տացէ նմա վայելել և ժառանգել, Քրիստոս անմահ թագաւորն թագաւորաց. զոր նմա փառք և գոհութիւն ի յամենայնէ, այժմ և յաւէտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Եւ էր ի թագաւորութեան Նորա ամք 25. և յորժամ վաղճանեցաւ՝ էր ամաց 52։ Հայր մեր որ յերկինս։

1574. Թվ. ՌԻԳ. Մարտի ամսոյ Ի, Աղուհացիցն։ Եղաւ այսպիսի բան, զի Օլախաց երկիրն նոր ուրիշ պարոն կու բերէին միւս պարոնի վերայ. և երբ լսեց այս Օլախաց պարոնն՝ որ կոչէր Իւոն վոյվոտայ, իսկոյն պատրաստելով զզօրս իւր գնաց ընդդէմ իւր թշնամոյն. և եհաս ի Մինդանին երկիրն, և եգիտ զինքն անպատրաստ. զի նստել էին ճաշոյ ուտելոյն. և եհաս ի վերայ նոցա և կոտորեց. և փախեան ի Պրայիլն, և փակուեցան ի բերդն այս նոր պարոն։ Եւ այս հին պարոն Իւոն կատղեցաւ և բարկութեամբ բորբոքեցաւ և եկն ի Պրայիլն, և զքաղաքն զամենայն հրով այրեց և թալանեց. և զքաղաքացիսն՝ զոմն ի սուր մաշեց, զոմն ի Տունան (Դանուբ գետ) ընկղմեց անողորմ, մինչեւ բուն երեխայքն. և զամենայն բարութիւն երկրին և քաղքին աւար առնելով դարձաւ ի տեղի իւր։ Յետոյ այդ գաւառին Թուրքերն ժողովեցան և պատերազմեցան ի հետ Նորա, և զնոսա կոտորեցին 2000 անձն։ Յետոյ զբանն խոնտիքարին ազդեցին, եթէ Պոլտանի պարոնն քեզ խային (թշնամի) դարձաւ, և ուրացաւ զքեզ և գլուխ քաշեց, և այսչափ չարիք գործեց և վնաս։ Եւ խոնդիքարն իբրեւ զկատաղի գազան մեծաւ ցասմամբ և սրտմտութեամբ հրամայեց սանճախներաց և Դաղրի խանին, զի գայցեն ի վերայ Օլախի պարոնին, և զերկիրն զամենայն